

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՄԱՔԵՆՈՑԱՑ ՈՒԽՏԸ ԵՎ ՍՈՂՈՄՈՆ ՄԱՔԵՆԱՑԻՆ

Մաքենիսը ոչ միայն Գեղամա երկրի, այլև Պատմական Հայաստանի հնագույն հոգևոր-մշակութային կենտրոններից էր: Մինչև 10-րդ դարը այն մտնում էր Գեղարքունիքի մեջ, որից հետո Սյունյաց մետրոպոլիտ Հովհաննեսի օրոք հիշվում է Սյունյաց Սոթք գավառի 80 հարկատու գյուղերի ցանկում¹:

Մաքենիսը հայտնի էր իր «հռչակաւոր, համբաւատեմէ և մեծաքանէ» վանքով: Հնում գյուղը և վանքը մուսնանում են եղել և կոչվել են Մաքենոց-Մաքենեաց կամ Մաքենոցաց, ինչպես նաև Մաքեստից անուններով:

Մաքենիսում միաբանություն հիմնվել է դեռևս 8-րդ դարից առաջ և, մատենագրական աղբյուրների վկայությամբ, իր հնությամբ և ճշմանկությամբ համեմատվել միաբանություններից հնագույններից մեկի՝ Ակոռիի միաբանության հետ²: Այդ մասին են վկայում նաև վանքի պարսպի ներսում և նրանից դուրս հայտնաբերված՝ վաղ քրիստոնեության շրջանի շինությունների հետքերը³:

Մեծանուն գիտնական Ղ. Ալիշանը Մաքենիս անունը ստուգաբանում է միաբանների կրած զգեստի՝ մաքենի կամ օդենի (ոչխարի մորթի) անվան հետ: Մաքենոցաց վանքը կառուցված է ձորի պռնկին, կարմրագույն քարով, դրա համար էլ այն երբեմն կոչվել է նաև Կարմիր վանք⁴: Ձորի միջով հոսում է Մաքենոցաց-Կարմիր վանք գետը, որը համարվում է Սևանա լիճ թափվող ամենամեծ գետերից մեկը⁵:

Մաքենոցաց վանքի և նրա միաբանության մշակութային ծաղկուն գործունեությունը կապվում է «գրոշակելի այրն Սողոմոն»-ի՝ «Հարանց հոր» անվան հետ, որն, ինչպես վկայում է Մովսես Կաղանկատվացին, «Ժամանակին Հայաստանեացն

¹ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910 թ., էջ 304-305, 315:

² Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1898 թ., էջ 65:

³ Մո. Մնացականյան, Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 60: Այսուհետև՝ Հայ ճարտարապետության Սյունիքի դպրոցը:

⁴ Ղ. Ալիշան, Սիսական, էջ 66:

⁵ Նույն տեղում, էջ 27:

պարծառ» էր⁶: Նա մասնակցել է Մանագլերտի հայտնի եկեղեցական ժողովին: Ասորական Եկեղեցու հայրերի հետ միասին 726 թ. հրավիրված այս ժողովի նպատակը Հայ և Ասորական Եկեղեցիների միջև եղած դավանաբանական որոշ տարածայնությունների հարթումն էր: Հայ պատմիչներն այս ժողովի արդյունքները գնահատում են միանշանակ. «Վասն Քաղկեդոնի աղանդոյն», «սրբեաց զհաւատս ի մարդադաւն աղանդոյն», «ի բաց ընկացեալ զդաւանութիւնն Քաղկեդոնի»⁷: Օրմանյան Պատրիարքը գտնում է, որ ժողովի նպատակն ամենից առաջ «ապականության խնդրին ծայրահեղությունները, աստվածաշարժարությունն ու երևութականությունը հերքելը և ուղիղ դավանության կետը որոշելն էր»⁸:

Սակայն պարզ է, որ այս ժողովում ընդունված 10 մզովքներն ակնհայտ միաբնակ ուղղվածություն ունեին, և վարդապետության այս հարցում թե՛ Հայ և թե՛ Ասորական Եկեղեցիները կատարելապես համաձայն էին: Ծիսական վիճելի հարցեր թերևս երկու Եկեղեցիների միջև կային (Ծմնոյան տոնը դեկտեմբերի 25-ին, թե՛ հունվարի 6-ին, Սուրբ խորհրդի գինին ջրախառն, թե՛ ամփառն և այլն), սակայն մնաց հարցերում Հայ Եկեղեցին մնաց իր ավանդական կարգին: Այսպես է ձևակերպում Սողոմոն Հարանց հայրը Մանագլերտի ժողովի արդյունքները, պատասխանելով իր աշակերտի՝ Սողոմոն Գառնեցու մամակին. «... ոչ պարտեցան Հայք ի հաւատոյ...»⁹:

Թե՛ երբ և որտե՞ղ է ծնվել Սողոմոն Մաքենացին, հայտնի չէ: Այդ մասին մենք աղոտ մատենագրական տեղեկություններ անգամ չունենք: Անկասկած է, որ նա ստացել է իր ժամանակի փայլուն կրթությունը, եղել է ամենախմաստուն և զարգացած հոգևոր հայրերից մեկը: Ուստի պատահական չէ, որ իր առաջնորդության տարիներին ոչ միայն հռչակավոր է դառնում Մաքենիսի մենաստանը, այլև նրա հիմնադրած դպրոցը, որը շուրջ մեկ դար գրեթե առանց ընդհատվելու շարունակում էր իր գործունեությունը:

Դժբախտաբար, ինչպես Մաքենցաց դպրոցի, այնպես էլ մեմոսիմակս այլ դպրոցների պատմությունը գրելիս մեր տեղեկությունները շատ հաճախ սահմանափակվում են սոսկ այդտեղ սովորած աշակերտների ձեռքով կատարված ընդօրինակություններում հանդիպող հազվագյուտ վկայություններով: Դրանք էլ միանալով մատենագրության մեջ եղած հատուկներն հիշատակությունների հետ, այս կամ այն չափով ուրվագծում են միջնադարում գործող տվյալ դպրոցի պատմությունը:

Ստ. Օրբելյանի վկայությամբ, Մաքենիսի դպրոցը էր «... համբաւատեմէ և մեծաւքանէ հանդիսարանն, ի հրեշտակերամ կրօնաստանն սուրբ և յատուածաբանակ

⁶ Մովսէս Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983 թ., էջ 314:

⁷ Սամուել Անեցի, Հաւաքումնք ի գրոց պատմագրաց, Էջմիածին, 1893 թ., էջ 87: Վարդան Արեւելցի, Հաւաքումն պատմութեան, Վենետիկ, 1862 թ., էջ 73: Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, Երևան, 1961 թ., էջ 69:

⁸ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Բեյրութ, 1959 թ., էջ 840-842:

⁹ Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից, էջ 272:

առաքինարանն Մաքենոցաց»¹⁰, ուր ուսանելու էին գալիս Հայաստանի տարբեր ծայրերից:

Եվ ահա, Սողոմոն Հարանց հոր համբավը լսելով, այս «յաստուածաբանակ առաքինարան» է ուղևորվում Դվիմի հայտնի դպրատանն ուսանած Ստեփանոս Սյունեցիին՝ մեծ մատենագիրը, «իմաստաւեր և անյաղթ հռետորը»: Ստեփանոսը՝ Դվիմի ավագ քահանա Սահակի որդին, հրաժարվելով բազմամարդ քաղաքից, գնում է Մաքենոցաց ուխտ: «Աստուածագգեաց սրբերի» Սողոմոն Մաքենացու մոտ խստակրոն և ճգնավորական կյանք է վարում և ուսանելու հետ մեկտեղ ուսուցչից իրեն է փոխանցվում սրբերի վկայաբանությունները¹¹:

Դժվար է ասել, թե Սյունեցին որքան մնաց Մաքենիսում, հայտնի է միայն, որ մի քանի տարի անց, «իմաստասիրական գիտութեան» մեջ ավելի խորանալու նպատակով, 701 թ. գնում է Սյունյաց մետրոպոլիտ, երանելի եպիսկոպոս Մովսեսի մոտ սովորելու: Կատարելապես տիրապետելով աստվածաբանությանը և 705 թ. վարդապետ ձեռնադրվելով՝ այստեղ աշակերտներին Սուրբ Գրքի մեկնությունն է ուսուցանում¹²:

Մովսեսի մահից հետո նա Դվին է տեղափոխվում և իր աշակերտական ընկերոջ՝ Գոգիկի հետ մեկնում Կոստանդնուպոլիս՝ արտաքին գիտություններ ուսումնասիրելու, մասնավորապես երաժշտության մեջ հմտանալու (710 թ.): Ե. Քասունին գտնում է, որ Սյունեցին արտասահման է գնացել երկու անգամ և վերադարձել 728 թ.¹³: Կոստանդնուպոլսից բացի նա լինում է Աթենքում և Հռոմում: Կատարելագործվելու հետ միասին աշակից ունենալով հայազգի Դավիթ Հիպատին, նա զբաղվում է թարգմանությամբ: Այդ թարգմանություններն այնուհետև հայոց վարդապետականների համար ուսումնական ձեռնարկներ են դառնում: Ստեփանոս Սյունեցին հայրենիք վերադառնալուց հետո ստանձնում է Սյունյաց մետրոպոլիտի պաշտոնը՝ մինչև իր մահը:

Հարանց հայր Մաքենացու մոտ է սովորել Սողոմոնը, որն էր «ի քաղաքագիտէն Գառնոյ, և ի մանկութենէ առեալ էր զլուծ կրօնաւորութեան կարգի...»¹⁴: Սողոմոն Գառնեցին շուտով հասնում է դառնում ժամանակի առաջավոր գիտություններին: Պատմիչի հաղորդած տեղեկությունները մեզ հնարավորություն են տալիս գաղափար կազմելու Մաքենոցաց վարդապետարանում ուսուցանվող առարկաների մասին: Այստեղ դասավանդվել են փիլիսոփայություն, աստվածաբանություն ու սաղ-

¹⁰ Ստ. Օրբելյան, Պատմություն, էջ 133: Այս բոլորը գալիս են հաստատելու Բ. Սարգիսյանի վկայակոչման ճշմարտացիությունը, ուր ասվում է. «Աղվանից պատմագրին ավանդածին համաձայն՝ Է-Հ դարում՝ միայն Մաքենոցաց վանքին մեջ 600-800 վարդապետք և վարժապետք շարունակ ձեռագիրներ օրհանկելու, շարադրելու և մանրանկարելու կը զբաղեին» (Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին ի վեճետիկ, 1914 թ., էջ Ժ):

¹¹ Ե. Քասունի, Պատմություն հին հայ դաստիարակության, էջ 165:

¹² Նույն տեղում: Գ. Հովսեփյան, Մխիթար Այրիվանցի, Բելյուք, 1931 թ., էջ 17-18:

¹³ Ե. Քասունի, Պատմություն հին հայ դաստիարակության, էջ 169:

¹⁴ Հովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 110:

մոսերգություն՝ երաժշտություն. «...վարժեալ իսկ էր ի փիլիսոփայական արուեստս և առաւել ևս հմուտ լեալ փառալուծեան կրթանաց»:

Վարդապետական աստիճան ստանալուց հետո Սողոմոնը մնում է իր ուսուցչի կողքին, Մաքեմիսում¹⁵: Սակայն ուխտի միաբանների մեջ 50-ական թվականների սկզբին առաջանում է անհամաձայնություն. Հարանց հայրը իր համակիրների հետ տեղափոխվում է Վայք և Ջրեսկ կոչվող վայրում մոր միաբանություն հիմնում: Որոշ ժամանակ անց Սողոմոն Գառնեցին ևս մեկնում է ուսուցչի մոտ: Այս բաժանման պատճառը, Օրմանյանի ենթադրությամբ, «կրօնական խստութեանց աստիճանի վրա տարբեր տեսութիւններ ունենալն» էր¹⁶: Հարանց հոր մահից հետո Սողոմոն Գառնեցին ստանձնում է Ջրեսկի միաբանության առաջնորդությունը և խոր ծերության հասակում համաձայնվում կաթողիկոս ընտրվել (791 թ.)¹⁷:

Հարանց հոր՝ իր կողմնակիցների հետ Ջրեսկ տեղափոխվելը պետք է որ 747 թվականից հետո լինի: Մինչ այդ, նա մասնակցում է 740 թ. Աղվանից կաթողիկոսի Ծամբորում հրավիրված ժողովին և գործում մասնակցություն ունենում Վրաց կաթողիկոսին ուղղված նախատանաց թղթի կազմմանը¹⁸, իսկ 747 թ. կազմում է տերունական տոների լուսաբանմանը և նախատակների հիշատակին նվիրված «Տոնական» ժողովածուն, որի համար Սողոմոն Մաքեմացին ստանում է «Հարանց հայր» մականունը:

«Տոնականի» ինքնագիր օրինակը մեզ չի հասել, սակայն նրա մասին հնագույն տեղեկությունը պահպանվել է 1200-1202 թթ. Եկեղյաց գավառի Ավագ վանքում ընդօրինակված Տոնականում, որը հայտնի է «Մշո Տոնական» կամ «Մատղնտիր» անունով: «Տոնականը» ժողովածու է, ուր, ըստ տարեկան տոների ընթացքի, գետեղված են հայ և համաքրիստոնեական հայրերի վարքերն ու վկայաբանությունները, ինչպես նաև ներբողներ և ճառեր: Այդ պատճառով այն երբեմն կոչվել է նաև «Տոնացոյց» կամ «Մատական մատեան յաղագս տօնից» կամ «Մատղնտիր»¹⁹:

«Մշո Մատղնտիրի» առաջին էջում եղած հիշատակարանից իմանում ենք, որ աստվածարյալ պատմությունները՝ ճառերը «ի կանոն կարգադրութիւն» հավաքել, ի մի է բերել Սողոմոն Մաքեմացին²⁰: Այս խիստ անհրաժեշտ ժողովածուն Աստծո այր Սողոմոնը ավարտում է «...ի գաւառին Գեղարքունի, որ յորջորջեցաւ յանուն նախարարին Գեղամա, ի թուականին ՇՂԶ (747)... անուանելով Տանականը...»²¹:

Տոնականի Սողոմոն Մաքեմացու խմբագրած օրինակին մոտ պետք է համարել վերը նշված Տոնականը, որը պահվում է Մաշտոցի անվան մատենադարանում (ձեռ. 7729): Չնայած ձեռագրի որոշ թերթերի բացակայությանը, ժողովածուն պա-

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 310:

¹⁷ Հ. Դրասխանակերտցի, Պատմութիւն Հայոց, էջ 110:

¹⁸ Մ. Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուամից, էջ 310:

¹⁹ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Երևան, 1981 թ., էջ 901:

²⁰ Ե-ԺԲ դարի հիշատակարաններ, էջ 31:

²¹ Նույն տեղում:

րումակում է 327 միավոր: Այստեղ նյութեր կան հայ եկեղեցական գործիչներից ու մատենագիրներից՝ Գրիգոր Լուսավորչից, Սահակ հայրապետից, Եղիշեից, Մովսես Խորենացուց, Դավիթ փիլիսոփայից, Սեբեոսից, Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսից, Զաքարիա կաթողիկոսից, ինչպես նաև այլազգի մատենագիրներից:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, քրիստոնյա հայրապետների և մատենագիրների վարքերի մի մասը հայերեն է թարգմանվել սկսած 5-րդ դարից: Այդ դարից են գալիս նաև հայկական հնագույն վարքերն ու վկայաբանությունները²²: Հանրահայտ է, որ մենք Մեսրոպ Մաշտոցի մասին ունենք երեք հավաստի աղբյուր. Կորյունի «Վարք Մաշտոցի», Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու պատմությունները: Մաքենացու կազմած Տոմարկանում կա Մաշտոցին նվիրված մի այլ տարբերակ, որը հայտնի է «Փոքր Կորյուն» անունով: Այն ստեղծվել է հիմնականում Կորյունի երկի համառոտումով, ինչպես նաև Խորենացու «Հայոց պատմության», Մեսրոպի և հայ գրերի մասին նյութերի ներհյուսումով: Ենթադրվում է, որ «Փոքր Կորյունը» խմբագրել է Սողոմոն Մաքենացին ու մոծել Տոմարկանի մեջ²³:

Այդ ժամանակ է գրված և Մաքենացու կողմից խմբագրված Վահան Գողթնեցու վկայաբանության երկրորդ տարբերակը: Վահան Գողթնեցին ժամանակակիցն էր Սողոմոն Մաքենացու, որը և հանուն հավատքի դարձի է եկել և ճահատակվել ու արժանացել մեծ առաքինությանը և սրբակրոն բարքով օծոված Հարանց հոր ուշադրությանը:

703 թ. հայոց մեծ արհավիրքի տարին է, երբ արաբները Հայաստանի արևելյան շրջանները, մասնավորապես Նախիջևանն ավերելուց հետո Աբումելիք Էմիրի հրամանով հայկական օջախներից տեղահանեցին մեծ թվով հայերի և բնակեցրին Էմիրության սահմաններում: Գաղթվածների մեջ էին նաև հայ մախարարների երեխաները, որոնց Էմիրության մեջ բարձր դիրք է տրվում: Այդպիսի մախարարներից մեկի՝ Խոսրով Գողթնեցու որդին էր Վահանը, որն Էմիրի արքունիքում ստացել էր փայլուն կրթություն և «իմաստասանայր ուսմամբ և ճարտարութեամբ», սակայն մոռացել ու անհաղորդ էր մնացել յուր դավանանքին:

Տարիներ անց Էմիրին փոխարինած որդին՝ Օմարը, բոլոր բռնազաղթված հայերին հայրենիք վերադառնալու թույլտվություն է տալիս: Արքունիքում մեծ հեղինակություն վայելող Վահանը արյան ու հավատքի կանչով ցանկանում է հայրենիք վերադառնալ: Դժվարությամբ հաղթահարելով արգելքները, նա գալիս է Գողթն՝ իր հայրենի տիրույթները, և քրիստոնեական հավատով լեցուն խոստովանում «իր անգիտութեան մեղսն»:

Վկայաբանությունից իմանում ենք, որ Սողոմոն Մաքենացին քաջատեղյակ է եղել Վահան Գողթնեցու վկայաբանական ընթացքի բոլոր դրվագներին: Վահանը երբ ընդունում է քրիստոնեություն, Էմիրի պահանջով ստիպված է լինում վերադառնալ արքունիք՝ Դամասկոս: Իր անելիքներն իմանալու համար, քանի որ ամեն-

²² Ա. Մաթևոսյան, Ե՞րբ և որտե՞ղ է գրվել Մշո ժառանգիրը, Բանբեր Մատենադարանի, թիվ 9, Երևան, 1969 թ., էջ 140-141: Այսուհետև՝ Ե՞րբ և որտե՞ղ է գրվել...:

²³ Կորյուն, Վարք Սուրբ Մեսրոպ Մաշտոցի, աշխատության Ա. Մաթևոսյանի, Երևան, 1995:

ուր նրան խորհուրդ էին տալիս այցելել Հարանց հորը, նա գալիս է Մաքենիս: Պատմելով իր վիճակի մասին, նա Սողոմոն Մաքենացուց ստանում է «յորդորական խրատս և քաջակերություն», ու Հարանց հայրը միաբանների հետ միասին «մեծաւ սիրով ու արտասուօք» ճանապարհում է նրան²⁴: Ինչպես երևում է, վկայաբանության սկզբնական տարբերակը չի բավարարել Սողոմոն Մաքենացուն, ուստի նա դիմել է Արտավազդ Աբրահամին կազմել նորը:

Վահան Գողթնեցու վկայաբանությունը մեզ է հասել երկու խմբագրությամբ. առաջինը գրվել է Վահանի մահատակությունից հետո, Գողթնեցու ուղեկիցների պատմածների հիման վրա, Արծկեի Երաշխավոր վանքի վանահայր Արտավազդ Աբրահամի ձեռքով, 737 թ.: Այդ գործի հիշատակարանում վկայություն չկա Աբրահամի Միջագետք գնալու մասին²⁵: Երկրորդ խմբագրությունը ևս Արտավազդ-Աբրահամի ձեռքով է գրվել՝ առաջինից յոթ տարի անց, ինչպես վկայում է հիշատակարանը. «Իսկ ետ է (7) ամի հայր վանացն Երաշխատրի, որոյ անուն Աբրահամ կոչի... իջեալ յԱսորեստան, և գնացեալ հասեալ ի քաղաքն Ռուծափ...»: Աբրահամը Ռուծափ է գնում Գողթնեցուն մկիրված պատմության հունարեն օրինակը բերելու: Վերադարձին Ուռհայում թարգմանել է տալիս այն ու վերադառնում Երաշխավորի վանք և 744 թ. ավարտում Վահան Գողթնեցու մահատակությանը մկիրված պատմության նոր խմբագրությունը²⁶:

Բացի Գողթնեցու վկայաբանությունից, Մաքենացու կազմած Տոնականի օրհնակի մեջ մտել են Եղիշեի խրատները, Շուշանիկի վկայաբանությունը, Ներսես Կաթողիկոսի պատմությունը, Սահակ Բագրատունու Թուղթը, Աբգար թագավորի Թուղթը (ձեռ. 4803) և, վերջապես, Փոքր Կորյունը ու այլ գործեր, որոնք գրվել են մինչև Մաքենացին: Տոնականը մեծ գործածություն է ունեցել Հայոց Եկեղեցում և ժամանակի ընթացքում լրացվել նոր նյութերով:

Մշո Ճառընտիրից, ընտրությամբ ընդօրինակվել է և կազմվել Վենետիկի թիվ 228 Ճառընտիրը, իսկ թիվ 229-ը Մշո Ճառընտիրից անջատված 17 թերթերն են: Բ. Սարգսյանը, ուսումնասիրելով այս Տոնականները և հենվելով դրանց սկզբում դրված՝ Մաքենացու հիշատակարանի վրա, գրում է. «Թուի թե երկրորդ օրինակ իցե կամ անընդմիջապես գաղափարեալ յառաջնոյ անտի, զոր հաւաքեալ կարգադրեաց Սողոմոն՝ Մաքենացաց ուխտին առաջնորդ»²⁷: Սակայն Վենետիկի թիվ 228 ձեռագրի գրիչ հայր Ն. Սարգսյանն իր հերթին ևս նոր միավորներ է մուծել Ճառընտիրի իր ընդօրինակության մեջ. «խառն օրինակեցի զսա ի բնագրէն ոչ միահետ և

²⁴ Վկայաբանություն Սրբոյն Վահանայ Գողթնացոյ, Սոփերք Հայկականք, հտ. ԺԳ, Վենետիկ, 1854 թ., էջ 61-75:

²⁵ Այս վկայաբանության երկու խմբագրությունների մասին եղած անտիպ ուսումնասիրությունը մեզ է տրամադրել պատ. գիտ. թեկնածու Ա. Մաթևոսյանը, որի համար մենք մեր շնորհակալությունն ենք հայտնում:

²⁶ Ե-ԺԲ դարի հիշատակարաններ, էջ 29-30, ծմ. 2:

²⁷ Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեան ի Վենետիկ, Բ. Բ. Վենետիկ, 1924 թ., էջ 469:

ոչ զամենայն ճառս, այլ զորս կարևոր վարկայ ընտրանա ընդօրինակեցի»²⁸։ Ուստի ո՛չ սույն ձեռագիրը և ո՛չ էլ Մշո Շառընտիրը, սերվելով ստուգապես Մաքենացու օրինակից, բնավ էլ ճրա կրկնությունը չեն, քանի որ և՛ Մշո Շառընտիրում, և՛ Վենետիկի թիվ 229-ում կան միավորներ, որոնք Տոնական են մտցվել Մաքենացուց և հետագայում կա այդ մասին վկայություն։ «Քրիստոս Աստուած, ողորմեա Բարսեղին, որ զարինակս պատրաստեաց»²⁹։ Այս և մյան հարցերին անդրադարձել է Արտաշես Մաթևոսյանը Մշո Տոնականին նվիրված իր ուսումնասիրության մեջ³⁰։

Տոնականի ուսումնասիրությանը զբաղվել է նաև բելգիացի հայագետ Միշել Վան Էսբրոեկը։ Նա Մշո Շառընտիրը համեմատել է Մատենադարանի թիվ 948 (1196 թ.), 3782 (12-րդ դ.), 1515, 7441 (1322 թ.), 4709 (1344 թ.), 7443 (1353 թ.) 3791 (1453 թ. առաջ), 995 (14-րդ դ.), 993 (1456 թ.) Շառընտիրների, որոնց նախագաղափար օրինակը հին է եղել, և Փարիզի Ազգային գրադարանի թիվ 110 (1194 թ.), 116-118 (1317 թ.) 115 (13-14-րդ դ.) 120 (1350 թ.), ինչպես նաև Երուսաղեմի թիվ 1, և Վենետիկի 202 Տոնականների հետ։ Հեղինակը եկել է այն եզրակացության, որ դրանք բոլորն էլ սերում են Սողոմոն Մաքենացու օրինակից, սակայն ամենահարազատը Երևանի թիվ 993-ն է³¹։

Մաքենացու կազմած օրինակի շառավղին է պատկանում նաև Փարիզի Ազգային գրադարանում պահվող մի այլ Տոնական (թիվ 178)։ Այն ընդօրինակված է 12-րդ դարում, ուր, բացի համաքրիստոնեական հայրերի գործերից, կան նաև Հայոց Եկեղեցու հայրերի երկու տասնյակից ավելի վկայաբանություններ ու պատմական գործեր։ Շառընտիրում եղած հայկական նյութերը ստեղծվել են մինչև Մաքենացին։ Մեր ձեռագրական ու բանասիրական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Մաքենացու կազմած Տոնականի՝ մեզ չհասած օրինակին ամենահարազատը Փարիզի Ազգային գրադարանի թիվ 178 Տոնականն է³²։

Սողոմոն Մաքենացուն պատկանող այլ գործեր մեզ չեն հասել։ Ծառ աղոտ տեղեկություններ ունենք նրա՝ Մաքենիսում եղած վերջին տարիների մասին։ Գրեթե ոչ մի տեղեկություն չունենք նրա և իր միաբանության գործունեության վերաբերյալ Ջրեսկ տեղափոխումից հետո։ Հայտնի է միայն, որ նա վախճանվում է առաջացած տարիքում Ջրեսկում և ապա տեղափոխվում Մաքենիս ու թաղվում Մաքենացու վանքում։ Նրա գերեզմանի հովանու ներքո 1486 թ. Ալեքսանոս գրիչը Մաքենիսում ավարտում է ձեռագիրը «ի սուրբ ուխտս Մաքենացու, ի դուրս Սուրբ տաճարիս Աստուածածնիս և հայր Սողոմոնի գերեզմանին»³³։

²⁸ Նույն տեղում։

²⁹ Ա. Մաթևոսյան, Ե՞րբ և որտե՞ղ է գրվել..., էջ 142։

³⁰ Նույն տեղում։

³¹ M. Van Esbroeck, La structure du r'epertore de i'homeliare de Mush, Միջազգային հայագիտական գիտաժողով, 1982 թ., Զեկուցումներ, Երևան, 1984 թ., էջ 282-306։

³² Մ. Մազիստրոսի Ցուցակ, էջ 10-18։

³³ Մատենադարան, ձեռ. № 6648, էջ 269 ա։